

# ՀՆՁԱԿԵԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

## 1917Ի ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1917 ՓԵՏՐՈՒԱՐ-1918 ՄԱՅԻՍ)

ԳԵՂԱՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԻԵԱՆ  
vahagn1990hovhannisan@mail.ru

### ՄՈՒՏՔ

1917 Փետրուարի 27ին Պետրոգրադում յեղափոխական գանգուածների ճնշման տակ Նիկոլայ Բ. ցարը հրաժարուեց գահից: Ռուսաստանում տապալուեց ինքնակալութիւնը: Իշխանութիւնն անցաւ Ժամանակաւոր Կառավարութեանը, որը ձեռնամուխ եղաւ պետական իշխանութեան, ողջ հասարակութեան ժողովրդավարացման գործընթացին: Յեղափոխութիւնը պէտք է լուծէր երկրի առջեւ ծառացած կենսական խնդիրները՝ սահմանադիր ժողովի հրավիրում, հողային հարցի լուծում, քաղբանտարկեալների համաներում, ժողովրդավարական ազատութիւնների հոչակում եւն., իրականացնէր բազմազգ կայսրութեան ժողովրդուների ազգային ծգուումները:

Փետրուարեան իրադարձութիւնների մասին լուրերը կայծակի արագութեամբ հասան Կովկաս: Թէեւ տեղական իշխանութիւնները սկզբում փորձում էին ժողովրդից գաղտնի պահել ցարի հրաժարականի մասին լուրը, հնարաւոր յուզումների առիթ չտալու համար, սակայն դա չաջողուեց: Շուտով շարժումը ծաւալուեց Կովկասեան Բանակի ռուս զինուորականութեան, բանուորների, գիւղացիութեան, մտաւորականութեան եւ ցարիզմին ընդդիմադիր քաղաքական կազմակերպութիւնների շրջանում: Արեւելահայութիւնը եւս ներքաշուեց յեղափոխական շարժման մէջ, որը քաղաքական նոր իրադրութիւն ստեղծեց եւ հայ ժողովրդի համար բախտորոշ այդ ժամանակաշրջանում հայ քաղաքական ուժերի առջեւ նոր խնդիրներ դրեց:

Փետրուարեան Յեղափոխութիւնը նոր ազդակ ծառայեց Հնչակեան Կուսակցութեան գործունէութեան համար: Ռուսաստանի եւ Կովկասի կուսակցական մասնաճիւղերը դուրս եկան ապօրէն դրութիւնից: Վերակազմուեցին մի շարք վայրերի հնչակեան կառոյցները (Երեւանի, Կարսի, Սուլխումի, Բաթումի, Նոր-Նախիջևանի), որոնք ապօրէն դրութեան ընթացքում գրեթէ դադարեցրել էին իրենց գործունէութիւնը:

Հայ գաղթօջախներում ցրուած հնչակեան մասնաճիւղերը միաւորուում էին գործադիր կոմիտէների մէջ, որոնք էլ՝ մարզային կուսակցական վարչութիւնների մէջ, իսկ վերջիններս Ենթարկուում էին կուսակցութեան գերազոյն մարմնին՝ Կենտրոնական Կոմիտէին, որը 1915ից գտնուում էր Թիֆլիսում։ Նրա կազմի մէջ էին Սիմոն Հովեանը (Տաշիր), Յակոբ Ղազարեանը (Լազօ), Արշակ Բաբայեանը (Բաբռով)։ Կոմիտէի տպագիր օրգաններն էին 1916ից Թիֆլիսում հրատարակուող Գաղափարը եւ *Սոցիալ-Դեմոկրատ*, որը հրատարակուեց 1917ին։ Այս ամէնի հետեւանքով ստուարացան կուսակցութեան շարքերը եւ 1914ի դրութեամբ նրա շարքերում հաշւում էր մօտ 14 հազար մարդ<sup>2</sup>։

Ռուսաստանի եւ Կովկասի հնչակեան մասնաճիւղերը իրենց հրապարակած թոռուցիկներով ողջունեցին Փետրուարեան Յեղափոխութիւնը։ 1917 Մարտի 7ին հրապարակած թոռուցիկուում կուսակցութեան Երեւանի մասնաճիւղը ողջունեց Ռուսաստանի բոլոր քաղաքացիներին ինքնակալութեան տապալման եւ ժողովրդավարական կարգերի հաստատման առթիւ<sup>3</sup>։ Մարտի 15ին կուսակցութեան Ռուսով-Նոր Նախիջեանի մասնաճիւղն իր թոռուցիկուում ողջունեց «բռնակալութեան լծից ազակագրուած Ռուսաստանի բազմազգ ժողովրդին» եւ առաջադրեց հետեւեալ անյետաձգելի խնդիրների իրագործումը. ա) հիմնադիր ժողովի (սահմանադիր ժողով - Գ.Յ.) գումարում՝ ընտրութեան ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ գաղտնի հիմունքով, առանց սեռի խտրութեան, որը միայն իրաւասու է որոշելու երկրի կառավարման ձեւը, բ) ռամկավարական (ժողովրդավարական) հանրապետութեան, գ) խօսքի, մամուլի, ժողովների, միութիւնների կատարեալ ազատութեան, դ) բոլոր ազգերի հաւասարութեան եւ ինքնորոշման իրաւունքի, ե) ժողովրդական ուստիկանութեան կազմակերպում ներքին կարգապահութեան պահպանման համար, զ) քաղբանտարկեալների ներում, է) բոլոր առանձնաշնորհումների վերացում, ը) 8ժամեայ աշխատանքային օր, ը) պարենաւորման գործի կարգաւորում, թ) զինուորական եւ քաղաքացիական պաշտօններից հին վարչակարգի կողմնակիցների հեռացում<sup>4</sup>։ 1917 Մարտի 22ին Հնչակեան Կուսակցութեան Ալեքսանդրապոլի մասնաճիւղն իր թոռուցիկուում կոչ արեց «բոլոր ուժերով օգնելու նոր կառավարութեան մարմիններին եւ պատերազմի դաշտում կռուող մեր մարդիկ ընկերներին, որոնց յաղթութեամբ միայն կը

ամրապնդով ձեռք բերած ազատութիւնը»: Թոուցիկն աւարտում է «Կեցցէ Յեղափոխութիւնը, ոռւսական քաջարի զօրքը եւ ազար Ռուսականը» խօսքով<sup>5</sup>:

1917 Փետրուարեան Յեղափոխութիւնը հնարաւորութիւն տուեց բանտերից ու աքսորից ազատուելու բազմաթիւ հնչակեանների, որոնց թում էր Մարօ Նազարեէկը: Հակապետական ու յեղափոխական գործունէութեան համար Մարօն ձերբակալուել էր դեռեւ 1910 Ապրիլի ճին եւ բանտարկուել Թիֆլիսի Մետէսի բանտում<sup>6</sup>: Փրկագինի դիմաց ազատուել էր 8 ամիս անց, բայց կրկին՝ 1911ին, ձերբակալուել էր ու դատապարտուել 6 տարուայ աքսորի՝ Կրասնոյարսկի երկրամասի Մինուսինսկ քնակավայր: Հնչակեան յայտնի գործիչ Ասօն (Տիգրան Օտեան) փորձում է կազմակերպել Մարոյի փախուատը, սակայն ցարական ոստիկանութիւնը բացայացեց եւ Թիֆլիսում ձերբակալեց Ասոյին<sup>7</sup>: 1916ին Մարօն հիւանդութեան պատճառով ազատում է աքսորից եւ վտարում Նորուեգիա: Ռուսաստան է վերադառնում Փետրուարեան Յեղափոխութիւնից յետոյ, Պետրոգրադում հանդիպում Լենինին, Տրոցկուն: Լենինը Մարոյին իրաւասութիւն է տալիս, որով նա կարող էր խորհրդակցական ձայնի իրաւունքով մասնակցել Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատ Բանտուրական Կուսակցութեան (ՌՍԴԲԿ) խմբակցութեան նիստերին: Պետրոգրադից Մարօն մեկնում է Բաքու եւ Շահումեանին է յանձնում Լենինի նամակը: Այնուհետեւ հաստատում Թիֆլիս, ուր աշխատանքի է անցնում Թիֆլիսի Կարմիր Խաչի կոմիտէում, աշխատակցում հնչակեան Գործաւոր թերթին<sup>8</sup>:

1917 Մարտի 12ին Թիֆլիսում կայացաւ տեղի հնչակեան մասնաճիւղի ժողովը, որտեղ ընդունուած բանաձեւը ուղարկուեց Պետրոգրադ՝ ժամանակաւոր Կառավարութեանը: Բանաձեւի հիմնական կէտերն էին՝ ինը վարչակարգի փոփոխութիւնը, ժողովրդավարական ազատութիւնների հաստատումը, ազգերի ինքնորոշման իրաւունքը, սահմանադիր ժողովի իրաւիրումը: Հնչակեանները պաշտպանեցին պատերազմը շարունակելու ժամանակաւոր Կառավարութեան որոշումը եւ գաղափարական առումով մօտեցան մենշենիկներին (փոքրամասնականներ՝ ՌՍԴԲԿ մի թեւը):

Հնչակեան Կուսակցութեան մասնաճիւղերին ուղղուած  
Կենտրոնական Վարչութեան շրջաբերական-նամակում

պարզաբանուած էին Կուսակցութեան գործունէութեան հիմնական սկզբունքները: Մասնաւրապէս Հայկական Հարցի առնչութեամբ, հնչակեանները գտնում էին, որ «Տաճկահայութեան դադը միջազգային մի հարց է, հերեւաբար Ս.Դ.Հ.Կ-ն աշխափում է, որ այդ հարցը լուծովի միջազգային վեհաժողովի սեղանի վրայ ի նպաստ Տաճկահայաստանի»<sup>10</sup>: Ինչ վերաբերում է արեւելահայութեանը, ապա ինքնակալութեան տապալումից յետոյ մինչեւ սահմանադիր ժողովի գումարումը կուսակցութիւնն առաջադրեց այն սկզբունքները, որոնք արտայայտուեցին նրա Կովկասի եւ Ռուսաստանի մասնաճիւղերի թոռուցիկ-կոչերում<sup>11</sup>:

Նկատելի է, որ Փետրուարեան Յեղափոխութիւնը Ռուսաստանի եւ Կովկասի հնչակեաններին էլ աւելի հեռացրեց արեւմտահայութեան ազատագրութեան եւ Հայկական Հարցում իրենց ունեցած սկզբնական հայեցքներից: Դրան հակառակ՝ արտասահմանի հնչակեան կառոյցները պաշտպանելով Կովկասի հնչակեանների տեսակէտերը, միաժամանակ Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան հարցում մեծ յոյսեր կապեցին Փետրուարեան Յեղափոխութեան հետ: Երիտասարդ Հայաստանն էլ աւելի առաջ գնաց, գրելով, որ Հնչակեան Կուսակցութեան առաւելագոյն նպատակն է լինելու Հայաստանի եւ Կիլիկիայի քաղաքական անկախութիւնը, իսկ նուազագոյնը՝ քաղաքական ինքնավարութիւնը:<sup>12</sup>

Կուսակցութիւնը պաշտպանեց ժամանակաւոր Կառավարութեան քաղականութիւնը: Սակայն այդ կառավարութեան կազմում ոչ-բոլոր քաղաքական ուժերի հայեցքներն էին համահունչ՝ հնչակեաններին: Խօսքը մասնաւրապէս վերաբերում է կադէտներին, որոնք առաջ էին քաշել «Միացեալ եւ անբաժան Ռուսաստան»ի գաղափարը: Հնչակեանների հայեցքները մօտ էին մենշեվիկներին ու էսէռներին (Ռուսաստանի Սոցիալիստ-Յեղափոխականների Կուսակցութիւն):

Փետրուարեան Յեղափոխութիւնից յետոյ ստեղծուած քաղաքական իրադրութիւնը պահանջում էր նաեւ կուսակցական նոր գործելակերպի եւ նոր քաղաքական ուղենիշների որդեգրումը, առաւել եւս, որ 1917ի ամռան դրութեամբ Հնչակեան Կուսակցութեան շարքերում գաղափարական միասնութիւն չկար: Արեւմտահայ հնչակեանները դէմ էին բոլշեվիկների

քաղաքականութեանը, նրանց հակակառավարական գործունէութեանը: Ռուսաստանի եւ Կովկասի հնչակեանների զգալի մասի գաղափարները համահունչ էին մենշեւիկներին: Մի մասն էլ բոլշեւիկներին էր համակրում (օր.՝ Մարտ Նազարեէկը):

Այս խնդիրները կարգաւորելու նպատակով 1917 Յունիսի 15ին Թիֆլիսում իր աշխատանքները սկսեց Ռուսաստանի, Կովկասի եւ Պարսկաստանի հնչակեան կազմակերպութիւնների Ա. համագումարը: Համագումարը քննարկեց կուսակցութեան դիրքը ժամանակաւոր Կառավարութեան հանդէա, միևնու կուսակցութիւնների հանդէա դիրքորոշումը, ծրագրային հարցեր, հողային հարցը, ազգերի ինքնորոշման հարցը, Կենտրոնի տեղափոխութեան խնդիրը, կուսակցութեան ընդհանուր պատգամաւորական ժողովի գումարման հարցը եւն.<sup>13:</sup>

Համագումարին մասնակցեցին 68 պատգամաւոր: Նիստերի նախագահը Գրիգոր Եղիկեանն էր: Այնտեղ ծաւալուեց ներկուսակցական կատաղի պայքար յատկապէս բոլշեւիկների հանդէա վերաբերմունքի հարցի շուրջ: Պատգամաւորների մեծ մասը (51 հոգի), այդ թում Եղիկեանը, կուսակցութեան կենտրոնը (Բաբով, Լազո, Տաշիր) դէմ քուէարկեցին բոլշեւիկների հետ գործակցութեանը<sup>14:</sup> Համագումարը որոշեց, որ ՍԴՀԿն, որպէս միջազգային ընկերվար-դեմոկրատիայի մի հատուածը, համերաշխ է գործելու ընկերվար-ժողովրդավարական այլ ուժերի հետ եւ «պեղական ուսակցիայի առաջացման ժամանակ կուսակցութիւնը կարող է բլոկ կազմել ոչ ընկերվարական կուսակցութիւնների հետ»<sup>15:</sup>

Համագումարը մշակեց կուսակցութեան դիրքը ժամանակաւոր Կառավարութեան եւ պատերազմի հանդէա.-

ա) ՍԴՀԿն պաշտպանում է ներկայ համախոհական կառավարութեանը, «որը երկիրը դրանում է դէպի ամենալայն դեմոկրատացում»<sup>16:</sup>

բ) Հաշտութիւն առանց բռնանուաճումների եւ ռազմատուգանքների, հասնել ազգերի ինքնորոշման իրաւունքի սկզբունքով:

գ) Համաեւրոպական պրոլետարիատի ըմբռստացում, որը բարեյաջող լուծում կը տայ թէ՛ պատերազմին եւ թէ՛ բոլոր ժողովուրդների ազատագրութեանը:

դ) Քայքայուած եւ կործանուած երկրների՝ Հայաստանի, Բելգիայի, Սերբիայի, Մոնտենեգրոյի, Լեհաստանի, Ռումինիայի լիակատար ազատագրում եւ վերականգնում:

Արեւմտեան Հայաստանի վերաբերեալ համագումարը բանաձեւ է ընդունում, ըստ որի Հայկական Հարցի լուծումը հիմնուելու է ազգերի ինքնորոշման սկզբունքի վրայ եւ դրանից ելնելով «ՄԴՀԿ-ն իր պարտականութիւնն է համարում շարունակել պաշտպանել այդ դաշը իբրև Հայաստանի ինքնավարութեան հարց»<sup>17</sup>: Հարցի վերջնական լուծումը, պէտք է յանձնուի «Միջազգային սոցիալ-դեմոկրատիայի դաշտարանին, որն աւելի արդարադար է քան միջազգային դիպլոմատիայի դաշտարանը»<sup>18</sup>: Կուսակցութիւնը պարտականութիւն է ստանձնում մշտապէս յիշեցնելու ընկերվարականներին այդ հարցը, որը չի բաժանում միևս ժողովուրդների ազատագրութեան հարցերից: Հնչակեանները յոյս էին յայտնում, որ ինչպէս ոռւս, այնպէս էլ եւրոպական երկրների ընկերվարականները «պապրասպ են Հայաստանի հարցը լուծելու հայ ժողովորդի երկարամեայ ակնկալութիւնների եւ փոքր ազգերի ազատագրութեան սկզբունքին համաձայն»<sup>19</sup>:

Անշուշտ, նկատելի է այն, որ Փետրուարեան Յեղափոխութիւնը որոշակի ոգեւորութիւն էր առաջացրել հնչակեանների մօտ, որոնք գերազնահատում էին միջազգային ընկերվարժողովավարութեան դերակատարութիւնը համաշխարհային քաղաքական հարցերում: Համագումարում մշակուեց եւ հաստատուեց կուսակցութեան նոր ծրագիրը, որտեղ հողային հարցի վերաբերեալ կէտերը իրենց իսկ բնորոշմամբ վերցուած են Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Բելգիայի ընկերվարժողովավարների ծրագրերից:

Համագումարում քննարկուեցին կենտրոնացուած եւ ապակենտրոնացեալ գործունէութեան հարցերը: Խրախուսուեցին տեղական մասնաճիւղերի ինքնուրոյն գործունէութիւնը, սակայն ընդհանուր բնոյթի հարցերում կենտրոնի հրահանգներին ենթարկուելու պայմանով<sup>20</sup>:

Համագումարը որոշում ընդունեց ընդհանուր պատգամատրական ժողով գումարել 1918 Յունուարին: Կուսակցութեան Կենտրոնական Վարչութիւնը բաղկացած էր լինելու 4 անդամից: Որոշուեց նաեւ Թիֆլիսում հրատարակել Նոր

*Աշխարհ* անունով օրաթերթ: Համագումարի որոշմամբ կուսակցութեան Կենտրոնական Վարչութինը մնալու էր Կովկասում<sup>21</sup>:

1917 Յունիսին հնչակեանները Թիֆլիսի տարբեր շրջաններում կազմակերպեցին հաւաքներ, ժողովներ, որոնց նպատակը Թիֆլիսի քաղաքային խորհրդի ընտրութիւններին իրենց թեկնածուների օգտին ձայների հաւաքումն էր: Ելոյթներ ունեցան Լազօն, Տաշիրը, Բաբովլը<sup>22</sup>: Իրենց յաջողութիւնն ապահովելու համար հնչակեանները ձգտեցին բլոկ կազմել Թիֆլիսում ուժեղ քաղաքական դիրքեր ունեցող մենշևիկների կուսակցութեան հետ իրենց թեկնածուներին առաջադրելով 1917 Օգոստոսին կայանալիք ընտրութիւններում: Նոյնիսկ նախնական համաձայնութիւն ձեռք բերուեց նրանց միջեւ, բայց երբ հնչակեանները ներկայացրին իրենց թեկնածուների ցուցակը, վրաց մենշևիկները հրաժարուեցին նրանց ընդգրկել միասնական ցուցակի մէջ, պատճառաբանելով, որ «հնչակեան թեկնածուների մէջ կայ նացիոնալիստ»<sup>23</sup>: Իհարկէ, սա պատրուակ էր հնչակեաններին մերժելու համար:

Նոյն պատճառով, հնչակեանները բոլշևիկների հետ չհամագործակցեցին եւ բլոկ չկազմեցին: Վերջիններս 7 ներկայացուցիչ կարողացան անցկացնել քաղաքային դումա, որոնց թում էին Ֆիլիպ Մախարաձէն եւ Միխա Ցխակայան<sup>24</sup>:

1917 Օգոստոսի 12-14ին Մոսկուայում տեղի ունեցած ժամանակաւոր Կառավարութեան խորհրդակցութեանը մասնակցում էր նաեւ Հնչակեան Կուսակցութեան Թիֆլիսի կենտրոնի պաշտօնական դեկավար Բաբովլը, որը պաշտպանեց ժամանակաւոր Կառավարութեան ներքին ու արտաքին քաղաքականութիւնը<sup>25</sup>:

Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխութիւնները պահանջում էին փոփոխութիւններ առաջացնել նաեւ քաղաքական կուսակցութիւնների ծրագրերում: Այդ պատճառով 1917 Յունիսին տեղի ունեցած համագումարը որոշեց կազմել կուսակցութեան նոր ծրագիրը: Այն բաղկացած էր 4 մասից: Առաջին մասում հիմնաւորուում էր պրոլետարիատի պատմական դերը բոլոր այն երկրներում, ուր տիրապետում էր արտադրութեան դրամատիրական եղանակը, այն է՝ ընկերվարական յեղաշրջման առաջացում եւ հասարակական նոր կարգերի

իիմնում, ուր այլեւս չկան դասակարգեր<sup>26</sup>: «Այդպիսի կարգերի վրայ հիմնուած ժողովրդական օրէնսդրութիւնը պէտք է ունալ հնարաւորութիւն դայ ողջ հասարակութեանը եւ նրա իւրաքանչիւր անդամին մասնակցելու հասարակական բոլոր գործերի քննարկմանն ու լուծմանը՝»՝ ասուած է ծրագրի առաջին մասում<sup>27</sup>:

Ծրագրի երկրորդ մասում տրուած են այդ գերագոյն նպատակին հասնելու քաղաքական, տնտեսական ու ընկերային բնոյթի գործողութիւնները: Դրանք են՝ պրոլետարիատի մէնատիրութեան ստեղծում, որը հնարաւորութիւն կը տայ քանուոր դասակարգին ազատորէն արտայայտելու իր ձգտումներն ու պահանջները եւ կազմակերպելու որպէս ինքնուրոյն քաղաքական մարմին: Նկատենք, որ ի տարրերութիւն բոլշևիկների, որոնք ձգտում էին պրոլետարիատի մէնատիրութեան հասնել յեղափոխական ճանապարհով, մերժելով պայքարի խորհրդարանական ձեւը՝ հնչակեանները գտնում էին, որ նոր կարգերի հաստատումը պէտք է հիմնուած լինի «օրինական-պառլամենտական հիմքի վրա՝ դեմոկրատական հանրապետութեան սրեղծման միջոցով»<sup>28</sup>: Այսուհետեւ շարադրուած են ժողովրդավարական հանրապետութեան քաղաքական, տնտեսական, իրաւական ու ընկերային քաղկացուցիչ տարրերը, որոնք են.-

ա) Երկամեայ ժամկետով լիիշխան օրէնսդիր ժողովի ստեղծում, որն իրաւասու լինի քննարկելու եւ որոշելու բոլոր քաղաքական, տնտեսական ու հասարակական հարցերը.

բ) Տեղական (նահանգային, գաւառական, համայնքային) վարչական լայն ինքնավարութիւն.

գ) Ընդհանուր, ազատ, գաղտնի եւ ուղղակի ընտրութեան իրաւունք: Ընտրութիւններից առաջ անհրաժեշտ է կատարել բնակչութեան մարդահամար.

դ) 20 տարիքը լրացած բոլոր քաղաքացիները իրաւունք ունեն ընտրելու եւ ընտրուելու որպէս ներկայացուցիչներ, ինչպէս օրէնսդիր ժողովում, այնպէս էլ տեղական կառավարման մարմիններում առանց ազգութեան, դասակարգի, կրօնի եւ սեռի խտրութեան.

ե) Ընդունել հանրաքութիւն սկզբունքը.

զ) Ընտրութիւնը կատարել միաժամանակ, որեւէ տօնական օր.

է) Դասակարգերի վերացում, օրէնքի առաջ բոլոր քաղաքացիների հաւասարութիւն.

ը) Անձի, բնակարանի եւ նամակագրութեան անձեռնմխելիութիւն.

թ) Մամովի, խօսքի, խղճի, ժողովների, միութիւնների, քարոզութեան, գործադրութիւնների ազատութիւն.

ժ) Պետութիւնից եկեղեցու անջատում.

ժա) Դպրոցի անջատում եկեղեցուց.

ժբ) Համընդհանուր զինապարտութիւն: Խաղաղ ժամանակ ժողովրդական ոստիկանութիւն.

ժգ) Ընդհանուր աշխարհիկ պարտադիր կրթութիւն.

ժդ) Պետութեան կազմի մէջ մտնող ազգերը իրաւունք ունեն բացել իրենց նախնական, միջնակարգ եւ բարձրագոյն ուսումնական հաստատութիւնները մայրենի լեզուի դասաւանդմամբ: Դրանց պահպանութեան միջոցները յատկացնելու են կառավարութիւնը եւ ինքնավարութեան տեղական մարմինները: Պետական լեզուի դասաւանդումը պարտադիր է.

ժե) Բոլոր լեզուների իրաւահաւասարութեան ճանաչում.

ժգ) Իրաւաբանական անվճար օգնութիւն: Երդուեալ ատենականների դատարան.

ժէ) Դատաւորների ընտրութիւն ժողովրդի կողմից.

ժը) Իրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի դատի տալու իրաքանչիւր պաշտօնեայի.

ժթ) Տեղաշարժման լրիւ ազատութիւն.

ի) Դատապարտուածների, ձերբակալուածների, զրպարտութեան զոհերի վնասների հատուցում.

իա) Գաղտնի դիւնագիտութեան վերացում.

իբ) Անվճար բուժօգնութիւն:

Ժողովրդի տնտեսական դրութեան բարելաման համար անհրաժեշտ է՝ ա) անուղղակի հարկերի վերացում, թ) հին հարկային համակարգի վերացում եւ նորի ստեղծում:

Բանուորների դրութեան բարելաման համար ծրագրում առաջարրուած էին հետեւեալ պահանջները.

ա) 8ժամեայ աշխատանքային օր.

թ) 42ժամեայ անընդմէջ շաբաթական հանգիստ.

գ) Աշխատաժամանակից դուրս աշխատանքների արգելում.

դ) Գիշերային աշխատանքի արգելում (բացառութեամբ տնտեսութեան այն ճիւղերի, որտեղ արտադրութեան առանձնայատկութեան բերմամբ անհնար է ընդհատել աշխատանքը).

Ե) Գիշերային աշխատաժամանակ սահմանել առաւելագոյնը 5 ԺԱՄ, որի համար պիտի վճարուի ինչպէս լրիւ աշխատանքային օրուայ համար.

զ) 14 տարեկանից ցածր երեխաների աշխատանքի արգելում: 14-17տ. երեխաների աշխատանքի թոյլատրում՝ առաւելագոյնը 6 ԺԱՄ.

Է) Կանանց աշխատանքի սահմանափակում: Նրանց աշխատանքից ազատել ծննդաբերութիւնից 4 շաբաթ առաջ եւ մինչեւ 6 շաբաթ անց, պահպանելով այդ ժամանակի նրանց լրիւ աշխատավարձը.

ը) Աշխատաւորութեան համար պետական ապահովագրութեան սահմանում ծերութեան եւ աշխատունակութեան կորստի ժամանակ: Վճարման այդ ֆոնով գոյանալու է այդ նպատակով դրամատէրերից վերցուած հարկից.

թ) Ձեռնարկատէրերին արգելում է որեւէ պատրուակով վարդնել աշխատավարձի որեւէ մաս.

ժ) Ապրանքներով աշխատավարձի վճարման արգելում.

ժա) Ձեռնարկատէրերի կամայականութիւններից աշխատաւորների կեանքի եւ իրաւունքների պաշտպանութիւն.

ժբ) Առողջա-բժշկական վերահսկողութեան եւ անվճար բուժօգնութեան սահմանում բոլոր ձեռնարկութիւններում, ուր կիրաւում է վարձու աշխատանք.

ժգ) Աշխատանքը պաշտպանող օրէնքների խախտման դէքքում ձեռնարկատէրերին քրէական պատասխանատուութեան ենթարկում:

Հողային ոլորտում կուսակցութիւնը առաջ էր քաշել հետեւեալ ծրագրային պահանջները.

ա) Գիւղացիութեան բոլոր դասակարգային սահմանափակումների եւ դրանից բխող հարկային, դրամական եւ այլ պարտաւորութիւնների վերացում.

բ) Պետական, վանքապատկան, արքունական եւ խոշոր մասնատր հողերի բռնագրաւում եւ յանձնում տեղական ինքնավարութեան մարմիններին.

շ) Բռնագրաւում ենթակայ հողերի նուազագոյն չափը որոշում է ինքնավարութեան տեղական օրգանը.

դ) Ծերերը, հաշմանդամները պետութեան կողմից ստանալու են կենսաթոշակ.

Ե) Անվճար բուժօգնութիւն.

զ) Կառավարութեան օժանդակութեամբ տեղական ինքնավարութեան մարմինները գնում կամ վարձակալում են հողի մշակման գործիքներ, որից անվճար պէտք է օգտուեն գիւղացիները.

Է) Միջնորդ յանձնաժողովների միջոցով հողի վարձակալութեան վճարի նուազեցում.

Ծ) Հողատէրերը մասնակցում են հողի վարձակալողների կրած վնասների հատուցման գործին.

Թ) Պետութիւնը ապահովագրում է գիւղացիների ցանքերը, այգիները բնական աղբյունների դէպքում.

Ժ) Անվճար գիւղատնտեսական կրթութիւն: Փորձարարական դաշտերի, այգիների եւ գիւղատնտեսական գիտափորձարարական կենտրոնի ստեղծում<sup>29</sup>:

Հողային հարցի վերջնական լուծումը ըստ հնչակեան ծրագրի՝ հողը տեղական ինքնակառավարութեան իշխանութիւններին յանձնումն էր:

Ծրագրի երրորդ մասը վերաբերում է ազգային հարցին: Պէտք է նկատել, որ ծրագրի այս մասը մշակուել էր դեռեւ 1909ին՝ կուսակցութեան ճրդ պատգամատրական ժողովում: 1917ի ծրագրում կարդում ենք. «Պաշտպանել պետութեան կազմի մէջ մինող ազգերի քաղաքական իրաւունքները: Մերժել մէկ ազգի սպորադասումը միայն: Ազգերին դալ ազար զարգացման հնարաւորութիւն: Ընկերային, քաղաքական, բնսկեսական ոչ մի արգելք չպէտք է խոչընդուղի որեւէ ժողովրդի ազար զարգացման հնարաւորութիւնը: Ազգերի ազար ինքնորոշման անժիստելի իրաւունքի ընդունում»<sup>30</sup>:

Ինչպէս նկատում ենք, ծրագրում բացակայում է կուսակցութեան նախորդ ծրագրերի հիմնական առանցքը՝ Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան դրոյթը:

Ծրագրի չորրորդ մասը վերաբերում է առաջադրուած նպատակներին հասնելու համար կուսակցութեան պայքարի միջոցներին, որոնք են՝ խորիրարանական գործունեութիւնը, քարոզչութիւնը, ցոյցերը, արհեստակցական եւ գիւղացիական միութիւնները, գործադուլները, գործարանային եւ սպառողական համագործակցական միութիւնները եւ միջազգային ընկերվարժողովրդավարութեան պայքարի այլ միջոցները:

1917ի ՍԴՀԿ ծրագիրը գրեթէ նոյնանում է ՌՍԴԲԿ մենշենիկեան ուղղութեան ծրագրի հետ, թէպէտ տեսնում ենք, որ գործնական հողի վրայ, յատկապէս ազգային հարցում, այս կուսակցութիւնների միջեւ առկա էին հակասութիւններ: Դրա վառ ապացոյցը վրաց մենշենիկների որդեգրած ոչ թէ հակահնչակեան, այլ հակահայկական քաղաքականութիւնն էր 1917-1920ին:

Կուսակցական աշխուժ գործունեութեամբ եւ հնչակեան գաղափարների քարոզութեամբ Անդրկովկասում աչքի ընկնող գործիչներից էին Լազոն, Ա. Բաբայեանը, Շմատոն (Գ. Կաֆեան), Խաչիկ Վարդանեանը, Պետրոս Մոճոռեանը, Վահան Մարսեանը, Հակ Բժշկեանցը (Գայ), Մ. Ստամբուցեանը, Սոկրատ Խան Գելոֆեանցը, Մելքոն Ասլիբեկեանը, Ֆլորա Վարդանեանը եւ այլք:

Ինչպէս նշեցինք կուսակցութեան ծրագրում բացակայում էր Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան հարցը: Կուսակցութեան նշանաւոր տեսաբան Ստեփան Սապահ-Գիլեանն անդրադառնալով այս հարցին իր «Քաղաքական հնքնավար Հայաստան Ու Անկախ Հայաստան» յօդուածում, գրում է, որ հայ ժողովորի համար միակ արդարացի պահանջը Թուրքիայից անջատուած քաղաքական ինքնավար Հայաստանն է: Հեղինակը նկատի ունի Արեւմտեան Հայաստանը, որի հետ միասին Կիլիկիան եւս անջատուում է Թուրքիայից եւ կազմում հայկական պետութիւն<sup>31</sup>: Սապահ-Գիլեանին եւ ընդհանրապէս հնչակեաններին ոգեւորում էր այն, որ ժամանակաւոր Կառավարութիւնը որդեգրել էր «պատերազմ միջեւ յաղթական աւարտ» կարգախօսը:

Ինչ վերաբերում է արեւելահայութեանը, ապա Սապահ-Գիլեանի «Ինքնավար Ռուսահայաստան»<sup>32</sup> յօդուածից պարզ է դառնում, որ Արեւելեան Հայաստանի քաղաքական կարգավիճակը պիտի լինէր Ռուսաստանի կազմում մշակութային-ազգային հնքնավարութիւն:

Եթէ արեւելահայութեան պարագայում իրադրութիւնը պարզ էր ու հասկանալի, ապա այդպէս չէր Արեւմտեան Հայաստանի հարցում: Վերլուծելով Արեւմտեան Հայաստանի յետագայ ճակատագրի հարցում Սապահ-Գիլեանի պատկերացումները, Վահան Մելիքեանը իրաւացիօրէն գրում է, որ այդ ծրագիրը «կարծես թէ անթերի էր, բայց կըրուած էր իրականութիւնից: Պէտք է հաշուի առնել այն,- գրում է Մելիքեանը,- որ 1917թ. Վերջերին Արեւմտեան Հայաստանը պարզապէս անկարող էր «հայկա-

կան գոյն եւ ծեսաւրութիւն» սլոանալ՝ հայկական տարրի գրեթէ բացակայութեան ու դրա ներհոսքի արգելման պարբառով»<sup>33</sup>:

## ԲՈԼԾԵՒԻԿԵԱԸ ՅԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՒ ԴԵՊՔԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ցարիզմի տապալումը եւ սկսուած յեղափոխութիւնը էլ աւելի խորացրեցին տնտեսական ճգնաժամը: Ժամանակաւոր Կառավարութեան դիրքերը թուլացան ոուսական բանակների անյաջողութիւններից եւ ներքաղաքական կեանքում կառավարութեանն ընդդիմադիր ուժերի, յատկապէս բոլշեվիկների հակապետական գործունէութիւնից: Այս հանգամանքներն էլ դարձան ժամանակաւոր Կառավարութեան անկման պատճառը:

1917 Հոկտեմբերի 25ին Պետրոգրադում Բոլշևիկեան Կուսակցութիւնը Լենինի գլխաւորութեամբ գինուած յեղաշրջման միջոցով տապալեց ժամանակաւոր Կառավարութեանը եւ գրաւեց իշխանութիւնը: «Բոլշեվիկեան յեղաշրջումն արմագապէս խարիսց Ռուսասրանի ազգային, պետական եւ քաղաքական դարաւոր կառոյցը, խափանուեց պարմական զարգացման եւ քաղաքական համակարգի շարունակութեան օրինաչափ ընթացքը»<sup>34</sup>:

«Հոկտեմբերեան յեղաշրջումն Անդրկովկասում ընկալուեց որպէս դաւաճանութիւն փեղրուարեան յեղափոխութեան եւ ժամանակաւոր Կառավարութեան ժողովրդավարութեան զարգացման հեռանկարին: Երկրամասի բոլոր կուսակցութիւնները եւ յեղափոխական-ժողովրդավարական կազմակերպութիւնները, բացի բոլշևիկներից դպրապարտեցին իշխանութեան ոչ-օրինական զալթումը: Քաղաքական կայունութեան հասպարման միակ ուղի եւ երաշխիք համարուեց սահմանադիր ժողովի հրակրումը»<sup>35</sup>: Գաղափարական այս դիրքերի վրայ էր կանգնած նաեւ հնչակեանների մեծ մասը:

Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ Անդրկովկասում լուծարուեց ժամանակաւոր Կառավարութեան օրգան ՕԶԱԿՈՄԸ (Անդրկովկասեան Յատուկ Կոմիտէ) եւ նրա փոխարէն ընտրութիւնների հիման վրայ կազմուեց իշխանութեան նոր մարմին՝ Անդրկովկասեան Կոմիսարիատը, որի նախագահ դարձաւ մենշենիկ Եւգենի Գեգեչկորին: Անդրկովկասի քաղաքական գլխաւոր ուժերը ստեղծեցին նաեւ օրէնսդիր մարմին՝ Սէմ, որտեղ վրաց մենշենիկները ստացան 36, մուսաւաթականները՝ 30, դաշնակցականները՝ 27 տեղ՝<sup>36</sup>:

Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ Ռուսաստանում ստեղծուած նոր իշխանութեան՝ Ժողովրդական Կոմիսարների խորհրդի առաջին պետական փաստաթղթերն էին հաշտութեան, հողի մասին հրովարտակները եւ Ռուսաստանի ժողովուրդների իրաւունքների հոչակագիրը:

Բոլշևիկների կառավարութիւնը յայտարարեց, որ միակողմանիօրէն դուրս է գալիս պատերազմից եւ առանձինն հաշտութեան պայմանագրեր է կնքելու Քառեակ Միութեան երկրների հետ:

1917 Դեկտեմբերին սկսուեցին Բրեստ-Լիտովսկի հաշտութեան բանակցութիւնները: 1918 Յունուարից սկսուեց ռուսական կովկասեան բանակի գօրամասերի դուրսբերումը ռազմաճակատից, որը ծանր հետեւանքներ ունեցաւ յատկապէս հայ ժողովորդի համար:

Հիմնուելով ազգերի ինքնորոշման սկզբունքի վրայ Ռուսաստանի ժողովրդական Կոմիսարների խորհրդով 1917 Դեկտեմբերի 29ին ընդունեց «Թուրքահայաստանի Մասին» հրովարտակը: Դրանով խորհրդային կառավարութիւնը յայտարարում էր, որ պաշտպանում է Ռուսաստանի կողմից գրաւուած Թուրքահայաստանի հայերի ազատ ինքնորոշման իրաւունքը՝ ընդհուպ մինչեւ լիակատար անկախութիւն<sup>37</sup>: Սակայն այս փաստաթուղթը կեանքի չկոչուեց եւ չէր էլ կարող իրողութիւն դառնալ մի շարք հանգամանքների պատճառով, որոնցից թերեւ ամենագլխաւորը ռուսական բանակի դուրսբերումն էր Արեմտեան Հայաստանի գրաւուած վայրերից: Նուազ կարեւոր չէին նաեւ Թուրքիայի ճնշման տակ Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից՝ 1918ի գարնանը եւ Անդրկովկասեան Սէյմում գոյութիւն ունեցող հակասութիւնները այն կազմած քաղաքական ուժերի միջեւ:

Օգտուելով նպաստաւոր քաղաքական իրադրութիւնից, համաշխարհային պատերազմում պարտութեան եզրին կանգնած Օսմանեան Կայսրութիւնը Գերմանիայի հովանաւորութեամբ կովկասեան ռազմաճակատում անցաւ հակայարձակման:

Անդրկովկասեան Կոմիսարիատն իր ներքին հակասութիւնների պատճառով ընդունակ չեղաւ լուրջ դիմադրութիւն կազմակերպելու:

Թուրքական գօրքերի առաջխաղացումը ոչ միայն ետ էր մղում Արեմտեան Հայաստանին անկախութիւն տալու հարցը, այլև սպառնում արեւելահայերի ֆիզիկական գոյութեանը:

Օրհասական այս դրութեան մէջ Հնչակեան Կուսակցութիւնը ազգային-քաղաքական միա ուժերի հետ մէկտեղ կանգնեց հայ ժողովողի պաշտպանութեան դիրքերում: Կուսակցութեան մասնաճիշտերն իրենց կոչերում եւ թուցիկներում բարձրացրին հայրենիքը զէնքով պաշտպանելու խնդիրը<sup>38</sup>:

Դեռևս չձեւատրուած հայկական ազգային բանակի պայմաններում թուրքական յարձակմանը փորձեցին դիմագրաւել Անդրանիկի, Սեպուհի, Սեբաստացի Մուրատի եւ այլոց մեծ ու փոքր աշխարհազօրային ջոկատները: Ազգային Խորհրդի կողմից Անդրանիկի զօրամասում, որպէս սպայ ուղարկուեց հնչակեան յայտնի գործիչ Պանդոկստը (Միքայէլ Սէրեան)<sup>39</sup>:

1918 Ապրիլի 9ին Թուրքիայի պահանջով Անդրկովկասի Սէյմը հոչակեց Անդրկովկասի Դաշնային ժողովրդավարական Հանրապետութեան անկախութիւնը եւ անջատուեց Ռուսաստանից: Սէյմի հայ պատգամատրները սկզբում բողոքեցին դրա դէմ, որովհետեւ ամէնեւին մտադիր չէին կտրուելու Ռուսաստանից՝ հաշուի առնելով թուրքական ներխուժման վտանգը, սակայն հարեւան ազգային միաւրներից չմեկուսանալու համար ի վերջոյ հաւանութիւն տուեցին Անդրկովկասի անկախութեանը<sup>40</sup>:

ՍԴՀԿ Կենտրոնական Վարչութիւնը 1918 Ապրիլի 11ին Անդրկովկասի քաղաքացիներին ուղղուած կոչում վճռականօրէն դատապարտեց Սէյմի կողմից Անդրկովկասը Ռուսաստանից բաժանելու եւ անկախ հանրապետութիւն հոչակելու որոշումը՝ այն որակելով «դաւաճանութիւն հանդէպ ռուսական մեծ յեղափոխութեանը»<sup>41</sup>:

Կոչը դատապարտեց Անդրկովկասի «հակայեղափոխական նացիոնալիստներին ու կեղծ սոցիալիստներին», որոնք միաւրուելով խզել են ռուսական ժողովրդավարական հանրապետութեան հետ ունեցած կապերը եւ Անդրկովկասի պետական-իրավական միջազգային դրութեան հիմք են ընդունել «թուրք-գերմանական օրիենտացիան»<sup>42</sup>:

Կոչում հնչակեանները դատապարտեցին նաեւ ՀՅԴ Սէյմի խմբակցութեան, որը մասնակցել եւ հաւանութիւն էր տուել այդ որոշմանը<sup>43</sup>: 1918 Մայիսի 16ին ՍԴՀԿ Կենտրոնական Վարչութիւնը դիմեց հայ ժողովրդին եւ նրա կուսակցութիւններին՝ զէնք վերցնելու եւ յարձակուող թուրքական զօրքի դէմ դուրս գալու: «Աւելի լաւ է զէնքը ձեռքին մեռնել ժողովրդի եւ յեղափոխութեան

նուածումների համար, քան թէ սպրկօրէն ընկնել թշնամու սրի եւ գնդակի առաջ՝ ասուած էր կոչում<sup>44</sup>:

### ՊԱՍԴՈՒԽԵԸ ԵՒ ՀՆՉԱԿԵԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՌԻԹԻՒՆԸ

1918ի ձմռանն ու գարնանը յարձակման անցած թուրքական գօրքի դէմ դուրս եկած հայ ռազմիկների շարքում աչքի ընկան նաեւ բազմաթիւ հնչակեաններ՝ հիմնականում ճրդ ջոկատից մնացած կամաւորները՝ Մշեցի Մուշեղը, Պոյօ Մանուկը, Չոփուր Միսակը, Վաղարշապատցի Մերքուշը, Ասատուրը, Քուրդ Ղազօն, Միսիթար Դարմանեանը եւ շատ ուրիշներ, որոնք հաւաքուել էին Պանդուխտի ջոկատում<sup>45</sup>: Պանդուխտի ջոկատը եւ հենց ինքը՝ Պանդուխտը մեծ ներդրում ունեցան 1918ի գարնանը թուրքական գօրքի դէմ հայ ժողովողի մղած պայքարի գործում<sup>46</sup>:

Այս դժուարին ժամանակաշրջանում Արեմտեան Հայաստանում եւ Սարդարապատում իր փառքի դափնին հիւսած Միքայէլ Սէրեանը չէր կարող հեռու մնալ հայրենիքի մի հատուածի համար մղուող պայքարից: Միշտ մարտական իրադարձութիւնների առաջին գծում լինելու գնով, Պանդուխտն իր ջոկատի հետ միացաւ Անդրանիկի Հայկական Առանձին Հարուածող Զօրամասին<sup>47</sup>:

1918ի ամռանն ու աշնանը Պանդուխտի ջոկատը մեծ ներդրում ունեցաւ թուրք-թաթարական (ադրբեջանական) յարձակումներից Զանգեզուրի հայութեան ինքնապաշտպանութեան գործում:

Իրենց քաջութեամբ յատկապէս աչքի ընկան հնչակեան մարտական գործիչներ Սարգիս Արմաղանեանը, Վահագն Նալբանդեանը, Սարգիս Ճեպէճեանը եւ այլոք:

1918 Փետրուարին Անդրանիկի Հայաստանի Երկրապահ Զօրամասին միանալու նպատակով մի խումբ հայդուկների հետ Սարդամիշից Էրզրում մեկնեց նաեւ Սարգիս Արմաղանեանը, որն իր տրամադրութեան տակ ունէր շուրջ 60 հեծեաններից բաղկացած մի խումբ: Մակեդոնի խմբի հետ միասին նա կոռի է բռնուում հակառակորդի հետ եւ «մաքրագործում Էրզրումի շրջակայ թրքական գիտերուն մէջ գպնուող շարք մը վկանգաւոր կէտեր...»<sup>48</sup>:

Էրզրումի անկումից յետոյ նա կազմակերպում եւ ապահովում է շրջակայ միքանի գիտերի հայ բնակչութեան նահանջը: Մայիսեան հերոսամարտի օրերին Արմաղանեանի խումբը գտնուում էր Լոռիում՝ Անդրանիկի գօրամասի կազմում<sup>49</sup>:

Ճեպէճեանը մասնակցել է 1918 Փետրուարին տեղի ունեցած Էրզրումի պաշտպանութեան մարտերին, այնուհետեւ՝ Սարիդամիշի կոհիներին: Սեբաստացի Մուրատն առանձնայատուկ գովեստով է խօսել Ճեպէճեանի քաջութեան մասին<sup>50</sup>:

Հնչակեան յայտնի տեսաբան Արսէն Կիտուրը մինչեւ 1918 Մարտը զբաղուած էր արեւմտահայ գաղթականներին Արագածի եւ Սեւանայ Լճի շրջանի գիտերում տեղաւորելու խնդիրներով՝ յիշեալ շրջանները թուրք-քրդական հրոսակախմբերից վնասազերծելուց յետոյ: 1918 Մայիսին Կիտուրը գտնուում էր Սարդարապատի պաշտպանութեան դիրքերում<sup>51</sup>:

Հնչակեան յայտնի գործիչ Վահագն (Գրիգոր) Նալբանդեանը դեռեւ 1916ի վերջերից լծուել էր «լեռները ցրուած հայու քեկորները հաւաքելու եւ փրկելու աշխալրանքին»<sup>52</sup>: Այդ նպատակով նա անցնում է Դերսիմի քրդերի շրջանը, նրանց հետ հաստատում բարեկամական կապեր եւ կաշառքի միջոցով ազատում մեծ թուով հայ որբերի: Այդ աշխատանքը շարունակում է մինչեւ 1917ի ձմեռը, երբ սաստիկ ցրտերի հետեւանքով հիւանդանում է եւ ստիպուած մեկնում է Թիֆլիս<sup>53</sup>:

Անդրանիկի Երկրապահ Զօրամասի ստեղծուելուց յետոյ Նալբանդեանը մտնում է նրա շարքերը: Թիֆլիսում Անդրանիկի յանձնարարականով աշխուժօրէն մասնակցում Երկրապահ Զօրամասին նոր կամաւորներ հաւաքագրելու գործին: Սեբաստացի Մուրատի հետ մասնակցել է Էրզրումի պաշտպանական մարտերին, իսկ քաղաքի անկումից յետոյ իր հեծեալ խմբով վերջինն է նահանջել Կարս:

Այդ շրջանում Անդրկովկասեան Սէյմում դիեկավար դիրքեր ունեցող վրաց մենշեւիկների վարած հակահայ քաղաքականութիւնը խիստ բացասական հետեւանքներ ունեցաւ հայութեան համար: Դրա արտայայտութիւնը եղաւ գլխաւոր հրամանատարութեան կողմից հայ կամաւորների նկատմամբ ցուցաբերուող անարդար վերաբերմունքը, նրանց մի մասի զինաթափումը, մի շարք փորձառու հայդուկապետերի հիասթափութիւնն ու բարոյալքումը: Թուրքերին զիշելով Կարսը՝ վրացիները նպատակ ունեին պա-հելու Բաթումը: Վերոյիշեալ պատճառներով 1918 Ապրիլին առանց դիմադրութեան յանձնուեց անառիկ ամրոց Կարսը:

Սէյմի վարած ոչ-հայանպատ քաղաքականութեան դէմ իր բողոքի ձայնը բարձրացրեց Անդրանիկը, որը Կարսի անկումից

յետոյ Նալբանդեանին առաջարկեց միանալ իր գօրամասին եւ հեռանալ Պարսկաստան, բայց վերջինս Սեբաստացի Մուլատի եւ այլոց հետ հեռացաւ Հիւսիսային Կովկաս, իսկ այնտեղից անցաւ Բաքու եւ աշխուժօրէն մասնակցեց թուրք-մուսաւաթականներից Բաքուի հայութեան պաշտպանութեան կողիներին<sup>54</sup>:

Ռազմաճակատում տիրող անիշխանութիւնը, խոճապային տրամադրութիւնները, անորոշութիւնը, զինուորական թոյլ կարգապահութիւնը, իսկ երբեմն էլ դրա իսպառ բացակայութիւնը, հայկական ուժերի ցրուածութիւնն ու փոքրաթիւութիւնը, բանակի հրամանատարութեան (որտեղ գիշաւոր դեր ունէին վրաց մենշենիկները) որդեգրած պարտուղական, հակահայ դիրքորոշումը որոշիչ նշանակութիւն ունեցան: Այդ պատճառով էլ չնայած Անդրանիկի, Սեպուհի, Սեբաստացի Մուլատի, Պանդուխտի եւ այլ փորձառու հայութիւնական ուժերի գործադրած ջանքերին, զաջող-ուեց կասեցնել թուրքական առաջխաղացումը: 1918 Ապրիլի դրութեամբ թշնամին վերագրաւել էր ողջ Արեւմտեան Հայաստանը եւ Մայիսին մտաւ Արեւելեան Հայաստան ու գրաւեց Ալեքսանդրա-պոլը: Արեւելահայութեան գիշին մահացու վտանգ կախուեց: Եւ մի-այն հայ ժողովրդի հաւաքական ու հերոսական ջանքերի շնորհիւ թուրքերին հակահարուած տրուեց 1918 մայիսեան հերոսամարտերում՝ Սարդարապատում, Ղարաբիլսայում եւ Բաշ-Ապարանում:

Դժուար է գերազահատել այս հերոսամարտերի պատմական դերը: Դրանք ոչ միայն ռազմական, այլև քաղաքական ու հոգեբանական մեծ նշանակութիւն ունեցան հայ ժողովրդի համար: Դրանք ազգի հաւաքական ուժի դրսեւորումն էին, առանց կուսակցական եւ այլ տարրերութիւնների. այն ուժի, որը դարձաւ դարեր առաջ կորսուած հայոց պետականութեան վերականգնման գրաւական:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 1456, գ. 1, գ. 327, թ. 23:

<sup>2</sup> Յիսնամեակ «Երիվասարդ Հայաստանի», Նիւ-Եորք, Հրատ.' «Սոց. Դեմ. ՀԱՀ. Կուս. Ամերիկայի Շրջ.», 1953, էջ 74:

<sup>3</sup>ՀԱԱ, ֆ.1456, գ.1, գ.200, թ.1:

<sup>4</sup> Նոյն, գ.197, թ.1:

<sup>5</sup>ՀԱԱ, ֆ.1456, գ.1, գ.198, թ.1:

<sup>6</sup> Նոյն, գ.164, թ.1:

<sup>7</sup> Հրանտ Ամիրեան, Մարոյի Հրեղէն Հեղոքերով, Երեւան, Յեղ. Հրատ., 2012, էջ 39:

- 
- <sup>8</sup>ՀԱԱ, ֆ.1456, գ.2, զ.31, թ.1:
- <sup>9</sup>Երդասարդ Հայաստան, Զիքալո, 30 Յունիսի 1917:
- <sup>10</sup>ՀԱԱ, ֆ. 1456, գ.1, զ. 209, թ. 1:
- <sup>11</sup>ՀԱԱ, ֆ.1456, գ.1, զ.209, թ.1:
- <sup>12</sup>Երդասարդ Հայաստան, 26 Մայիսի 1917:
- <sup>13</sup>ՀԱԱ, ֆ.1456, գ.1, զ.205, թ.1:
- <sup>14</sup>Ոնիքն Խոլշուտեան, «Փետրուարեան Յեղափոխութիւնը Եւ Հնչակեան Կուսակցութիւնը», Լրաբեր Հասարակական Գիլութիւնների, №3, 1978, էջ 24:
- <sup>15</sup>ՀԱԱ, ֆ.1456, գ.1, զ.210, թ.1:
- <sup>16</sup>ՀԱԱ, ֆ. 1456, գ. 1, զ. 210, թ. 1:
- <sup>17</sup>Նոյն:
- <sup>18</sup>ՀԱԱ, ֆ.1456, գ.1, զ.210, թ.1:
- <sup>19</sup>Նոյն:
- <sup>20</sup>ՀԱԱ, ֆ.1456, գ.1, զ. 210, թ. 1:
- <sup>21</sup>Նոյն, թ. 1-2:
- <sup>22</sup>ՀԱԱ, ֆ.1456, գ.1, զ. 207, թ.1-3:
- <sup>23</sup>Խոլշուտեան, էջ 26:
- <sup>24</sup>Նոյն:
- <sup>25</sup>Նոյն, էջ 27:
- <sup>26</sup>ՀԱԱ, ֆ.1456, գ. 1, զ.206ա, թ. 2:
- <sup>27</sup>Նոյն, թ. 3:
- <sup>28</sup>Նոյն, թ. 4:
- <sup>29</sup>ՀԱԱ, ֆ.1456, գ.1, զ.206ա, թ. 4-8:
- <sup>30</sup>Նոյն:
- <sup>31</sup>Երիկասարդ Հայաստան, 24 Նոյեմբեր 1917:
- <sup>32</sup>Երիկասարդ Հայաստան, 14 Յուլիս 1917:
- <sup>33</sup>Վահան Մելիքեան, Փեղրուարեան Յեղափոխութիւնը Եւ Հայաստանը, Երեւան, «Միխար Գօշ» Հրատ., 1997, էջ 236:
- <sup>34</sup>Վահան Մելիքեան, Իշխանութեան Հիմնահարցը Անդրկովկասում, Երեւան, Մեսրոպ Արք. Աշճեան Մատենաշար, 2010, էջ 7:
- <sup>35</sup>Նոյն, էջ 27:
- <sup>36</sup>ՀԱԱ, ֆ. 1456, գ. 1, զ. 215, թ. 1:
- <sup>37</sup>Հայոց Պապմութիւն, Հավոր Երրորդ, Գիրք Երկրորդ, Երեւան, «Զանգակ» Հրատ., 2015, էջ 606-610:
- <sup>38</sup>ՀԱԱ, ֆ.1456, գ.1, զ. 215, թ. 1. Նաեւ՝ զ. 211, թ. 1:
- <sup>39</sup>ՀԱԱ, ֆ.1456, գ.1, զ. 214, թ. 1:
- <sup>40</sup>Հայոց Պապմութիւն, Հպր. Զորրորդ, Գիրք Ա., Երեւան, «Զանգակ» Հրատ., 2010, էջ 12:
- <sup>41</sup>ՀԱԱ, ֆ. 1456, գ. 1, զ. 216, թ. 2:
- <sup>42</sup>Նոյն:
- <sup>43</sup>Նոյն:
- <sup>44</sup>ՀԱԱ, ֆ. 1456, գ. 1, զ.219, թ. 1:
- <sup>45</sup>Պապմութիւն Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան (1887-1962), Ա. Հպր., Խմբ.' Արսէն Կիտուր, Պէյրութ, Տպ. Շիրակ, 1962, էջ 480:

- 
- <sup>46</sup> Պանդուստի մասին մանրամասն տես՝ Եղիկ Ճերէճեան, Պանդուստ, Պէյրութ, Technopresse Moderne, 1999:
- <sup>47</sup> Մանուկ Ստեփանեան, *Արհապ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը Առաջին Աշխարհամարդի Եւ Հայոց Թեղասապանութեան ժամանակաշրջանում*, Երեան «Լահապետ» ՍՊԸ 2005, էջ 140-142:
- <sup>48</sup> Եղիկ Ճերէճեան, Յաւերծի Ճամբու Կերպիչներէն, Պէյրութ, Հրատ. Ա.Դ.Հ.Կ. Լիբանանի Վարչի Մարմնի, 2014, էջ 200:
- <sup>49</sup> Նոյն, էջ 202:
- <sup>50</sup> Նոյն, էջ 212:
- <sup>51</sup> Նոյն, էջ 263:
- <sup>52</sup> Նոյն, էջ 111:
- <sup>53</sup> Ճերէճեան, Յաւերծի, էջ 111:
- <sup>54</sup> Նոյն, էջ 114-115:

THE HNCHAKYANS DURING THE 1917 RUSSIAN REVOLUTION  
(FEBRUARY 1917-MAY 1918)  
(Summary)

GEGHAM HOVHANNISYAN  
vahagn1990hovhannisian@mail.ru

The 1917 February revolution in Tsarist Russia gave a further stimulus to the Hnchakyan Party. The party welcomed the overthrow of the tsarist regime and supported the policies of the Provisional Government.

However, the party was not unified in its views. The fate of Western Armenia further fueled ideological differences.

The Western Armenian Hnchakyans were against the activity of Bolsheviks, who called for the withdrawal of the Russian army from the Russo-Turkish battlefronts. Such a withdrawal would leave the Armenians undefended against the Turkish nationalists who had committed genocide against the Western Armenians. Besides, such an act would render the establishment of Armenian governance over Western Armenia and Cilicia almost impossible. Indeed, for the Western Armenian Hnchakyans the most eminent issue was the liberation of Western Armenia from the Turks.

On the other hand, most of the Eastern Armenian Hnchakyans were inclined towards the social democrat Mensheviks, while others were inclined towards the Bolsheviks. In order to resolve these outstanding issues a party conference was held in Tiflis in June 1917. The Conference came up with a new policy platform for the Party.

Against the backdrop of the messy conditions the Armenians lived in during the February 1917 Russian revolution and the mixed and conflictual views they had regarding the ongoing political developments, the article analyses the steps taken by the Social Democrat Hnchak Party leadership in upholding the rights of the Armenians.